# Ի՞նչպես խոսենք իրար հետ

*«Բոլորս էլ հանցանքներ ունենք: Ով որ իր խոսքերը կշռել գիտի, նա կատարյալ մարդ է…»* Հակոբոս 3:2

## Հիսուսի ուսուցումը հաղորդակցության մասին:

**1- Հաղորդակցության հիմքը վստահելն է**

*«Պարզապես ձեր այոն թող այո լինի և ոչը՝ ոչ:»* Մատթ. 5:37

**Արդյո՞ք վստահության հիմքը քանդում եմ…**

- Սուտ խոսելով
- Շողոքորթելով
- Խոստումս չկատարելով
- Լռելով

*«Բուժող լեզուն, կենաց հաց է…»* Առակաց 15:4

**2- Հաղորդակցությունը միշտ սրտից է բխում**

*«…բերանը սրտի եղածին է խոսում:»* Մատթ. 12:34

*«Որևէ բան որ դրսից մտնում է մարդի մեջ՝ չի կարող պղծել նրան, այլ ինչ որ դուրս է ելնում մարդուց, այն է պղծում նրան:»* Մարկոս 7:15

*«Որտեղ ձեր հարստությունն է, այնտեղ էլ կլինի ձեր սիրտը:»* Մատթ. 6:21

**3- Ազդեցիկ հաղորդակցությունը անկեղծ է**

*«Շրթունքներ է համբերում նա, որ հարմար պատասխան է տալիս:»* Առակաց 24:26

*«Ապրենք ճշմարտության համաձայն սիրով, և հետզհետե աճենք Քրիստոսի հետ…»* Եփեսացիս 4:15

*«Ոչ մի տգեղ խոսք թող չելնի ձեր բերանից: Խոսեցեք միայն <u>այն ինչ որ պետք է</u>, ինչ որ բարի է <u>ուրիշների հավատն ամրապնդելու համար</u>…»* Եփեսացիս 4:29

*«Հիսուսը պատասխանեց նրանց…ձեր կեղծավորներիդ…»* Մարկոս 7:6

*«Հիսուսը հանդիմանելով Պետրոսին՝ ասաց. Հետև՛ս գան, Սատանա՛…»* Մարկոս 8:33

*«Հիսուսը պատասխանեց (աշակերտներին). Ո՞վ անհավատ և մոլորված սերունդ, մինչև երբ պիտի ձեզ հետ լինեմ, մինչև երբ պիտի հանդուրժեմ ձեզ…»* Ղուկաս 9:41

## Դժվար կացությունների մեջ ի՞նչ պետք է անել

**1- Հիսուսը շոշափելով էր մարդկանց բուժում**

*«…նրանցից յուրաքանչյուրի վրա իր ձեռքը դնելով, Հիսուսը բժշկում էր:»* Ղուկաս 4:40

**2- Հիսուսը հարց տալով պատճառ էր լինում նրանք մտածեն**

*«Հիսուսը հարցրեց նրանց. Իսկ դուք ինչ եք ասում իմ մասին, ո՞վ եմ ես…»* Մարկոս 8:29

**3- Հիսուսը նկարագրելով նոր իմաստներ էր հաղորդում**

*«Հիսուսը պատասխանեց նրան և ասաց. լա՛վ իմացիր, որ եթե մեկը վերստին չծնվի, չի կարող տեսնել Աստծո արքայությունը:»* Հովհաննես 3:3

*«Մահն ու կյանքը լեզվի ձեռքին է…»* Առակաց 18:21

### *Ո՞վ պետք է լսի քեզանից…*

- *Կուզեմ վերակառուցել վստահությունը…*
- *Քեզ ներում եմ…*
- *Երկար ժամանակ է որ չենք խոսացել իրար հետ…*
- *Անկեղծորեն կուզեմ ասել …*

Հաջորդ քարոզի թեման:
**ԻՆՉՊԵ՞Ս ՎԵՐԱՑՆԵԼ ՎԱՏ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ**
Հովիվ Սարո Խաչիկեան